№ 14 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 2 ԱՊՐԻԼԻ 1894 № 14

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 րուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի: Թէհրանում գրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran. Rédaction CHAVIGH:

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է ցերեկուան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր քառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ է հասարակական ոգին—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Նամակ Նոր-Ջուղայից Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ղարադաղի գաւառը:

## ԻՆՉ Է ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈԳԻՆ

„Շաւղի“ 8-րդ թուի մեր խմբագրականը. „Ջուղայի հայոց հասարակական ոգին“ վերնագրով, տեղի տուաւ ինչպէս արդէն մեր ընթերցողները տեսան, երկու թղթակցութեանց նոյն քաղաքից, մէկը թեր, միւսը դէմ: Նախ մենք ուրախ ենք տեսնելով որ լրագրական յօդուածին այդ տեղ պատասխանում են յօդուածով, և այդ կերպով նպաստում են վիճաբանուած խնդրի լուսաբանութեանը. ոչ թէ հայհոյանքներով և լուտանքներով, ինչպէս դժբաղդաբար սովորութիւն է մեր մէջ:

Այնուամենայնիւ մենք հարկ ենք համարում յիշեցնել, որ լրագրի մէջ քննադատել մի հաստատութիւն, կամ մի հասարակութիւն, չէ նշանակում ոխ ունենալ նորա դէմ կամ ատել նորան. այլ ընդհակառակը՝ եթէ մեր սրտին շատ մօտիկ չը լինէին Ն. Ջուղայի ազգային շահերը, բազմակողմանի հաստատութիւնները, մենք ոչ թէ կը քննադատէինք, այլ կը լռէինք: Միւս կողմից, մենք առաջինը կը լինէինք բերկրանքով ճանաչելու մեր սխալը, եթէ այդ թղթակցութիւններից երևար որ մենք սխալուած ենք. դժբաղդաբար այդ պէս չէ:

Թողնելով երկրորդ նամակը, որ կէտ առ կէտ հաստատում էր մեր խմբագրականի մէջ յայտնուած գաղափարները, և դեռ աւելի առաջ էր երթում, մենք կը պատասխանենք պ. Գ. Ջօհրաբեանցի նամակի մի քանի կէտերին, որոնք ձգտում են հաստատել որ Ն. Ջուղան զուրկ չէ հասարակական կեանքից (երանի այդպէս լինէր): Ահա փաստերը. Ն. Ջուղայի հայերը օգնել են Հայաստանի սովեալներին (ժամանակին) նոյնպէս և թատերասիրաց ընկերութիւն են ունեցել (ժամանակաւ), Խաչատուր վարդապետի բացած հանգանակութեան նպաստել են (1888) հին ջուղայեցիք գումարներ են կտակել ազգային օգտին (ժամանակաւ). „Արարատ“ են բերել տուել. (այս էլ ազգասիրութիւն է!) Երուսաղէմայ պատրիարքին օգնել են. Ջուղայի հայերը ջուղայեցիներ էին ժամանակաւ և այլն և այլն, եթէ նոքա կանոնաւոր դպրոցական տուրք չեն վճարում իւրեանց դպրոցին, պատճառն այն է որ նորանցից չէ պահանջուած, և եթէ այդ բանի մէջ ամեն տեղի հայերը յանցաւոր են, ինչու միայն ջուղայեցիք պէտք է դատափետուին:

Ահա մեր քանի պատասխանները:

Մասնակցել հանգանակութեանց, չէ նշանակում ունենալ հասարակական ոգի. հասարակական ոգի կարող են ունենալ այդ հանգանակութեանց ձեռնարկողները, բայց ոչ բոլոր մասնակցողները, շատ ան-

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ
(Ղարադաղի Գաւառը)

Այդ լեռան ստորոտում մի „գաղէ“ (գետնափոր ախոռ) ծածկւում է լեռան գագաթից թափուած հողակոյտերով եւ քարերով: Այդ այդպէս մնում է, մինչեւ Ղարադաղ են գալիս հայերը, որոնցից մէկը սկսում է նորոգել այդ ախոռը, որպէս զի իւրը բանեցնէ իւր եղբայրների օգնութեամբ, ընտիրը փորելիս գտնում է մի խուրջին, որի երկու կողմերը լի են լինում ոսկիներով, որ այդ տեղ ներս է ինկել բանդուած երդկից, նոյն արշաւանքի ժամանակ: Այս նոյն ոսկիների մնացորդը կարծւում է թէ դեռ կայ այդ անձի որդիների մօտ, եւ ասում են թէ մինչեւ անցեալ տարիները նոքա դեռ այդ փողը ծախս էին անում:

2. Զանաղչի որ միւսի պատճառով կոչւում է բուտորին Զնաղչի 50 տուն հայ բնակիչներով: Այս գիւղի այժմեան շինութեան չորս անկիւններում հին ժամանակից եղել են չորս անառիկ բերդ որոնց աւերակներն այժմ պարզապէս յայտնում են նոցա նախկինը: Սոցա բնակիչները այնքան ճշնաւութիւն են ունեցել միմիանց հետ որ ամիսներով փակուած մնացել են բերդերի մէջ մինչեւ միւս գիւղերից հաշտարարներ են եկել սոցանց մէջ խաղաղութիւն ձգելու:

3. Սուլուղարայ կամ Ամիրարաղ (վերջին անուամբ կոչւում է, որովհետեւ Ն. Բ. Նայիբ Սալթանայի հրամանովն է շինուել 6—7 տարի սորանից առաջ) 16 տուն հայ բնակիչներով: Այս գիւղի շինութեան տեղի մասին պատմութիւններ են պատմւում որոնց մասին աւելորդ եմ կարծում այժմ խօսել:

4. Զանրադ ուր կան 8 տուն հայ միայն: Այս չորս գիւղերի կրօնական հովիւն է ծերունի հայր տէր Յովհաննէսը, որ ամենայն ժրութեամբ մինչեւ այժմ աւելի քան 40 տարի կառավարել է իւր թեմի ժողովուրդը: Տէր-հայրը ոչ միայն վիճակաւոր քահանայ է Ղարադաղի համար, այլ շրջականների թուրք եւ հայ բնակիչների պաշտելի բժիշկն է, որ ամեներին հիւանդին չը տեսած բժշկում է: Տէր-հօր դեղօրայքը այլ բժիշկների դեղերի տեսակից չեն. նա միշտ գործ է ածում հողեղէն դեղեր թուրք գրքից եւ այսպէս պատրաստում է թուրքերին մի տեսակ ակնածանքով վերաբերուիլ դէպի բժշկութիւնը:

Ինչպէս այս կողմերի այնչափ կատաղի թուրքերը մեղմանում են երբ իրանց վէճը կամ կռիւը մի հայի հետ է, վախենալով հայոց Քեաշիշի օջախից:

Մեծ եւ հին օջախ է տէր Յովհաննէսի օջախը. նոցա սերունդը պապից պապ բոլորը քահանայ են եղել: Այժմեան տէր Յովհաննէսի պապը նոյն անունով մեծ տէր Յովհաննէսը, բաւական յիշատակելի եւ պատմական մի քահանայ է եղել, նա եղբայրացել է Համադանի մեծ տէր Յովհաննէսի հետ խաչ եւ աւետարանով, որով սիրում եւ յարգում է տէր հայրը Համադանի մէջ տէր Յովհաննէսի սերունդը իւր տեսածներին:

Մինչեւ տասը փարսախ հեռուից, թուրքեր գալիս են իրանց հիւանդների համար հոգեւոր դեղ տանելու, եւ այնչափ հաւատացած են այդ օջախին որ եթէ տէր հայրը ներկայ չը լինի, նոցա ցաւը դարմանելու, նոքա կը բաւարարուին մի ուրիշ անձի գրութեամբ, որն այդ տանը բնակում լինի, եւ եթէ այդ էլ չը լինի, նոքա կը բաւարարուին այդ տան մի բուռը հողը տանելով, որի միջոցաւ իրանց հի-

